Ջ. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԶԲՈՒՆՔՆԵՐ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍՈՒՄ

Գեղարվեստական ոչ մի ստեղծագործություն չի կարող այնպես արտահայտել ժողովրդի կյանքի ամբողջությունը, ինչպես էպոսը։

Էպոսը պատկանում է ժողովրդական այն ստեղծագործությունների թվին, որոնք, Վ. Ի. Լենինի բնորոշմամբ, ճշմարտացիորեն ու բազմակողմանի արտացոլում են ժողովրդի կյանքն ու սխրանքները, «ժողովրդական հոգեբանությունը... ժողովրդի ձգտումներն ու սպասելիքները»[1]։

Այս իմաստով բացառիկ է «Սասունցի Դավիթ» էպոսի դերը մեր հոգևոր մշակույթի պատմության մեջ։

«Սասունցի Դավիթ» էպոսում մարմնավորվել են հայ ժողովրդի պատմության հերոսական էջերը, նրա մաքառումներն ու վսեմ գաղափարները։ Այն ոչ միայն գեղեցիկ կոթող է, դյուցազունների մի չքնաղ վիպերգ, այլև սերունդներին հայրենասիրության ու հումանիզմի, խաղաղասիրության ու աշխատասիրության ոգով դաստիարակելու մի հզոր միջոց։

«Սասունցի Դավիթը» աշխատավոր ժողովրդի բարոյական սկզբունքների կտակարանն է, այն դասվում է մարդկային մտքի բարձրագույն նվաճումների շարքում։

Դյուցազներգության մեջ մարմնացած ժողովրդի բարոյական հատկություններն արտացոլում են հասարակական այն ուժեղ հարաբերությունները, որոնցում ապրել է ինքը՝ ժողովուրդը։

Նա դրանք կերտել է ստեղծարար աշխատանքի ընթացքում և իր ազատագրության համար մղած պայքարում։

Նման հանգամանքներում են ձևավորվել հայ ժողովրդի բարոյական այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են հումանիզմը, աշխատանքի ու աշխատասիրության ըմբռնումը, հայրենասիրությունն ու ժողովուրդների բարեկամությունը, որոնք իրենց բարձրագույն արտացոլումն են գտել «Սասունցի Դավիթ» էպոսում։

Ներկա ուսումնասիրության մեջ էպոսը դիտվում է իբրև աշխատավոր ժողովրդի ստեղծագործություն, իսկ նրանում մարմնացած բարոյական սկզբունքները որպես տիրապետող-շահագործող դասակարգին հակադիր բարոյական հայացքներ ու նորմաներ։

Աշխատավոր մարդկության դարավոր մտորումներն ու երազանքները, մարդկանց բարօրության համար պայքարելու դաղափարներն անպաճույճ ու հստակ ձևով արտահայտված են Սասնա դյուցազունների չորս սերնդի կերպարներում, որոնք իրականացնում են արդար ու սուրբ աշխատանքը։ Էպոսի հերոսները աշխատանքի մարդիկ են՝ ստեղծագործ ու շինարար, նրանք արքայական պալատներում չէ, որ մեծանում են, նրանք հացի են նստում հովվի, գութանավորի հետ, եղբայրանում և պայքարում նրանց բարօրության համար, ոչնչացնում օտար բռնակալներին, բոլոր չար ուժերին, որոնք ձեռք են բարձրացնում նրանց արդար հացի ու խաղաղ կյանքի վրա։

Ժողովուրդը աշխատանքը համարում է առատության ու երջանկության միակ աղբյուրը։ Վերաբերմունքը դեպի աշխատանքը՝ բարոյական ամենաբարձր սկզբունքն է էպոսում։

Ժողովուրդը չի հանդուրժում այն, ինչ իր սեփական աշխատանքով չի ստեղծվել, ինչ որ արդար վաստակի արդյունք չէ, «խալալ» չէ։ Աշխատանքով են սկսվում նրանց դյուցազնական գործերը։ Հենց Սասնա բերդի կառուցումը մի «գորբնեղ» գետակի վրա՝ խորհրդանշում է աշխատանքի վեհությունը։

«Իսկական հերոսությունը,— գրում է Հ. Օրբելին,— հատուկ է նրանց, ում մատչելի է և՛ սրի, և՛ մուրճի, և՛ մանգաղի սխրագործությունը... սուրն ամենից ավելի ամուր կպահի այն ձեռը, որ վարժվել է պահել մուրճը և գութանի մաճը»[2]։

---

1 Вл. Бонч-Бруевич, Ленин о поэзии, Набросок из воспоминаний, «На литературном посту», 1931, № 4, стр. 4.

2 Հ. Ա. Օրբելի, Ջնկուցում էպոսի 1000-ամյակի առթիվ, «Գրական թերթ», 1939, № 29, էջ 3։

Սասնա հերոսների համար աշխատանքը կենսական անհրաժեշտություն է, հայը ստեղծվում է աշխատանքով։

«Գնանք մշակության, աշխատենք և ուտենք»,— ասում է Բաղդասարը Սանասարին[3]։ Աշխատելու և արդար աշխատանքի պտուղները վայելելու միտքը հատուկ է էպոսի բոլոր դրական հերոսներին, այդ միտքը կարմիր թելի պես անցնում է էպոսի սկզբից մինչև վերջ։ Դավիթը սպանում է Սասուն (=Հայաստան) եկած հարկահաններին և կենդանի է թողնում միայն մեկին՝ պատվիրելով հայտնել բռնակալ թագավորին. «Խարջն ի՞նչ ա, խարաջն ի՞նչ ա, Ինքն ո՞ւր, մենք ո՞ւր։ Նա իր համար աշխատի, ուտի, և մենք մեզ համար»[4]։

Սասունում ստեղծված խաղաղ ու ապահով կյանքը դեպի իրեն է ձգում ֆեոդալական դաժան հնչումներից տառապող աշխատավոր մարդկանց.

Շատ մարդեր որ լսան, ասին.
—...Ըհը, վալլա, մենք կ՝ էրթանք էդա Սասուն
Որ երկու փալավան կա,
Որ մեկ մարդ մեր մալեր չդարնե, տանի[5]։

Էպոսում պատկերվում է երկու կարգի աշխատանք՝ ստրկական և ազատ։

Ստրկական ու տանջալից աշխատանքի պատկերումը էպոսում սոցիալական թշվառ վիճակի և օտար հարստահարիչների դեմ բողոքի ու ցասման արտահայտությունն է։ Բռնի, հարկադրական, ոչ մարդկային աշխատանքի հետևանքով է, որ Սասնա կտնայք ու տղամարդիկ ողբերգություն են ապրում։

Մսրամելիքը բռնակալին հատուկ դաժանությամբ հարկահաններից պահանջում է պաշարված Սասունից բերել դեղեցիկ հարսներ ու աղջիկներ հարկի դիմաց։

Գացեք տասը հարս ու աղջիկ բերեք.
Խինդը իմ ոտները մաժա,
Խինդն էլ երեսիս ճանճերը քշա[6]։

Նրանց տանում են Մսր «ուզտ» բառնալու, «երկանք» աղալու և «զարավաշ» դառնալու համար։ Ահա այդ ստրկական աշխատանքն է, որ առաջ է բերում ժողովրդական ցասում։

Սակայն ինչպես Սասնա բերդի կառուցման, այնպես էլ Մարութա վանքի վերաշինման ժամանակ աշխատանքը դառնում է հաճելի, դերծ հարկադրանքից ու բռնադատումից, կրում է համժողովրդական բնույթ և ծառայում ընդհանուրի բարօրությանը։

Կառուցել պաշտպանվելու համար՝ ահա աշխատանքի նպատակը։ Սասնա դյուցազունների նման սումերական էպոսի դյուցազն Գիլգամեշը խորհուրդ է տալիս Ուրշանաբիին պարսպի ներսում տուն կառուցել և խաղաղությամբ ապրել. «Ուրուկի մեջ տուն մը շինիր և օրերդ խաղաղությամբ ապրես»[7]։

Եթե հայկական էպոսում ժողովուրդը արդարության ու առատության երազանքն արտահայտել է ցորենի մասրաչափ և դարու ընկուզաչափ լինելու ալեգորիայով, ապա ֆիննական «Կալևալայում» առատության ու մարդկանց բարօրության գաղափարը պատկերվել է դարբին Իլմարինենի կուված ինքնագաց Սամպոյի միջոցով։ «Ես անպայման կսարքեմ հրաշագործ-ինքնագաց Սամպոն, որ ամեն բարիք ստեղծի մարդու համար»[8]— ասում է Իլմարինենն։ Ինչպես հայկական, այնպես էլ ֆիննական էպոսներում այն բարձրագույն գաղափարն է արտահայտված, որ ստեղծագործ աշխատանքով է հնարավոր կրակ ու լույս ձեռք բերել ժողովրդի համար, որ մարդկության բարօրության աղբյուրն աշխատանքն է, ամենաստեղծ ու սուրբ աշխատանքը։

Ազատ ու արդար աշխատանքի տենչացող ժողովուրդը երազել է մեկընդմիշտ ոչնչացնել պատերազմը, կոտրել բոլոր արյուն թափող սրերը, ապրել խաղաղ։ Էպոսը ծայրեծայր թափանցված ու ողողված է խաղաղ աշխատանքի մեծ գաղափարով և այդ «գաղափարը նրա վրա սավառնում

3 «Սասնա ծռեր», հատ. Բ, երկրորդ մաս, էջ 19—20։
4 Նույն տեղում, էջ 34։
5 «Սասնա ծռեր», հատ. Ա., էջ 945։
6 «Սասնա ծռեր», հատ. Բ, երկրորդ մաս, էջ 135։
7 «Գիլգամեշ», Երևան, 1963, էջ 105։
8 «Калевала». Москва. 1956, стр. 216

է, ինչպես արևը Երկրի վրա» (Իսահակյան), հաղաղատենչ Սասունցի Դավիթն իր հզոր ձեռքերով կոտրում է քառասուն փահլևանների սրերը ու հայտնում մարդկանց, որ դրանք լավ խոփեր կդիտեն.

Դավիթն էլ ուշիկ մելավ,
Էնանց թրիր ժողվից, բոնից ուր ձեռ,
Սորա հրմեն կոտրից, ասաց.
— Էսանք խորոտ խոփ կելնի[9],

Դավթի ինքնաբերաբար աշխատանքի և խաղաղության գաղափարը ոչ միայն խորապես ազգային է, այլև համամարդկային։

Մեծ ջերմությամբ ու հարգանքով է պատմվում էպոսում գութանի ու գութանավորի մասին։ Գութանը, գութանով հերկելը ամենակենսականն է ժողովրդի համար. չէ՞ որ «աշխարհը գուրբնի մոտ կը դիանա»[10]։

Արդար աշխատանքով հաց վաստակելու, ապրելու գաղափարը էպոսում առաջադրվում է «բպես բարձրագույն բարոյական սկզբունք։

* * *

Էպոսում առաջնային տեղ են գրավում նաև հայրենասիրության ու ժողովուրդների բարեկամության, բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի ու անկախության պաշտպանության գաղափարները։ Դրական հերոսներն այդ մեծ գաղափարների կենդանի կրողներն ու իրականացնողներն են։

Հայրենիքի ազատության գաղափարը բարոյական հզոր ուժ է տալիս էպոսի դյուցազուններին ավելի խորն ատելու օտարազգի նվաճողներին. դա վեհացնող, ազնիվ ու բնական զգացմունք է։ «Հայրենասիրությունը՝ առանձնացված հայրենիքների՝ դարերով ու հազարավոր տարիներով ամրացված ամենախորն զգացմունքներից մեկն է»[11],—գրում է Վ. Ի. Լենինը։

Հայրենասիրությունն, ընդհանրապես, ունի ոչ միայն համազգային, այլև դասակարգային բնույթ։ Սակայն պատմական կոնկրետ պայմանների առկայության դեպքում, երբ ժողովուրդը ազգային-ազատագրական կռիվ է մղում արտաքին թշնամու դեմ, կարող են միավորվել ամենատարբեր սոցիալական ուժերը։ Արտաքին հակասություններն առաջին պլանի վրա են մղվում և դրանց լուծումը դառնում է հիմնականը, որոշողը, գլխավորը։ Այդ դեպքում է, որ հայրենասիրությունը ընդունում է համազգային կերպարանք։

«Սասունցի Դավիթ» էպոսում օտար բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը նույնպես իրենից ներկայացնում է առաջին պլանի վրա դրված արտաքին հակասությունների լուծման գեղարվեստական պատկեր։

Էպոսի հայրենասիրությունը համազգային է, քանի որ թշնամին գալիս է ոչ միայն շահագործելու, հարկ տանելու, այլև ոչնչացնելու ժողովրդին, կործանելու երկիրն այնպես, որ «ալ Սասուն անուն չեղնի աշխարհիս մեջ»[12], մի հանգամանք, որ ստիպել է «սաղ Սասունը» ոտքի հանել բնդդեմ թշնամու։

Այս իմաստով դժվար է համաձայնել Վ. Կ. Զալոյանի «Հայկական ռենեսանս» մեծարժեք աշխատության մեջ արտահայտված այն կարծիքի հետ, թե «Սասունցի Դավիթ» էպոսի պատմական հիմքը «...ֆեոդալական շահագործման դեմ աշխատավորների սոցիալ-դասակարգային պայքարի ծայր աստիճանի լարված վիճակն էր»[13], իսկ արտաքին նվաճողների դեմ մղած դարավոր պայքարը՝ «մի այլ հիմք», այսինքն՝ երկրորդական, ոչ հիմնական։

Սակայն որքան էլ ցայտուն են արտացոլված շահագործող ֆեոդալական վերնախավի դեմ աշխատավոր ժողովրդի ընդվզումներն ու պայքարի ոգին, այնուհանդերձ, ընդհանրապես էպոսներում, և մասնավորապես «Սասունցի Դավիթ»-ում, առաջին պլանի վրա դրված հիմնական հարցը մնում է օտար նվաճողներից հայրենիքի ու ժողովրդի ազատագրության հարցը։

---

9 «Սասնա ծռեր», հատ. Ա, էջ 1013։
10 «Սասնա ծռեր», հատ. Բ, երկրորդ մաս, էջ 512։
11 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 227։
12 «Սասնա ծռեր», հատ. Բ, առաջին մաս, 1944, էջ 176։
13 Վ. Կ. Զալոյան, Հայկական ռենեսանս, 1964, Երևան, էջ 87։

Մարքսը «Ասք Իգորի գնդի մասին» դյուցազներգության վերաբերյալ գրում է. «Պոեմի իմաստը է՝ ռուս իշխանների միավորման կոչը հենց մոնղոլների արշավանքից առաջ... Ամբողջ երգը... հերոսական բնույթ է կրում»[14].

Հեգելը էպիկական երկի հիմք հանդիսացող պատերազմը համարում է «համաշխարհային պատմական արդարացում»[15] վայելող հանգամանք։

Ռուսական էպոսի դյուցազն Իլյա Մուրոմեցը, հայրենիքին սպառնացող վտանգի առջև, մուսացության է տալիս իշխանավորից ստացած վիրավորանքը և հսկայական դուրգը առած իր «ախպերացուների» հետ գնում է երկիրն ազատելու վայրագ թշնամուց։ Ֆրանսիական քաջարի Ռոլանդը որոտացող ձայնով հնչեցնում է իր հսկայական փողը, ազատության կոչի է կոչում ժողովրդին՝ պաշտպանելու հայրենի Ֆրանսիան։ Իրանական էպոսի դյուցազուններ Ռուստամի և Էսֆիանդարի սխրագործությունները կատարվում են հայրենիքի ազատությունն ապահովելու՝ Թուրանի հորդաների, Մազանդարանի դևերի և Հոոմի գնդերի կործանող հարվածներից։

«Սասունցի Դավիթ» էպոսում ժողովուրդը կոչի է դուրս եկել արաբական բռնակալության դեմ, որը ոչ միայն նվաճել է երկիրը, ոչ միայն անսահման քանակությամբ հարկեր է տանում, այլև որպես հարկ տանում է գեղեցիկ կանանց, սպանում տղամարդկանց։ Ահա թե ինչու դառնորեն ողբում է սասունցի պառավը (=ժողովուրդը).

Ոսկին ըլներ, ուր կլոխ ուտեր...
Ախճրկներ արմաղան կը տանի,
Տղամարթեր հրմեն կը սպանի,
Մեղի հրմեն եղսիր կը տանի[16].

Հետևապես, Դավթի սուրը ժողովրդի պատվի և իրավունքի պաշտպանության համար ստարբոնակալների վրա բարձրացվող ժողովրդի ցասման կայծակնացայտ թուրն է։ Եվ որպես իրակված ճշմարտություն՝ որդեկորույս մոր սրտակեղեք ողբն է էպոսացել, Սասնա մայրերի՝ «լալոտաչքերի» արտասուք սրրող Դավթի հերոսությունն է էպոսացել։

Էպոսի հերոսների համար ժողովրդի, հայրենի հողի պաշտպանությունը կյանքի պայման է։ Մովիևարը նախընտրում է իր մահը, քան ժողովրդի ոչնչացումը։ Սանասարն ու Բաղդասարը կառուցում են հայրենի օջախը, ազատագրում երկիրը բոլոր ֆեոդալ-դևերից ու հրեշներից։

«Սասունցի Դավիթ» վիպերգը հայրենասիրական ներքրող է, բնությունն անդամ շնչում է այդ սրբազան զգացումով։ Հայրենի արևն էլ բարի է, անվտանգ. «...Մհեր, զգուշ կաց, ըստեղ Սասնա արև չի, Հալեպի արևն ա, քզի կը զարկա»[17],— զգուշացնում է Դոհարը։

Ինչպես հողն է համարվում հայրենիքի խորհրդանիշը, այնպես էլ ջուրը հայ ժողովրդի ուժի նրա դյուցազուն զավակներին հաղթանակի անկոտրում հավատով տոգորող կաթնաղբյուրն է։ Ջրի մոտ լինելու զաղափարը էպոսի հերոսների համար չափազանց հատկանշական է։ Սանասարն ու Բաղդասարը Սասնա բերդը կառուցում են —«ծանր» ու «որդ» ջրի վրա։ Քեռի Թորոսն ասում է Սանասարին.

Լաո, էս զգտի ջուր որդ ջուր ա,
Էրթանք, խասնինք ըստու գլուխ,
Մեր դասարեն շինինք...[18],

Ապա շարունակում է. ով որ «զուր տուն լե սուկե վրբ իդա ջրին, ընդրա ավլաղ լև որ եղնի՝ հրմյա զորեղ կ՝ եղնի»[19]։

Հայրենասիրությունը էպոսում գերագույն չափանիշ է առաքինության և մարդկայնության։ Սասնա դյուցազունների համար անազատ հայրենիք ունենալը մահից վատթար է։

Մեծ Մհերը Սասնա «ճրագը» վառ պահելու հույսը սրտում վերադառնում է Մսրից։ Հայրենիքի ապագան հառնում է նրա առաջ։ Առյուծին, դևերին ու Մսրամելիքին հաղթող դյուցազներ-

14 «Մարքսը և Էնգելսը արվեստի մասին», հ. 1, Երևան, 1963, էջ 658։

15 Հեգել, Բուն էպոսի առանձին հատկանիշները. «Խորհրդային գրականություն», 1950 - № 1, էջ 163։

16 «Սասնա ծռեր», հատ. Ա, 1936, էջ 1108։

17 «Սասնա ծռեր», հատ. Բ, երկրորդ մաս, 1951, էջ 212։

18 Նույն տեղում, էջ 657։

19 «Սասնա ծռեր», հատ. Բ, առաջին մաս, 1944, էջ 9։

դառնում է մի լուսամիտ փիլիսոփա. եթե դրժեն երդումը, կենակցեն ու որդի ունենան, կմեռնեն նույն օրը և դյուցազուն Մհերը, և չքնաղ Արմազանը։ Նրանց առաջ դրված է իրենց այսօրը և հայրենիքի վաղվա հզորությունը։

Անփական կյանքի կորուստը դեռ կորուստ չէ ժողովրդի. ավելին, այդ այնպիսի կորուստ է, որ կյանք է ծնում, ապրելու ու հզոր մնալու հավատ։ Ահա թե ինչու Դավթի ծնվելուց հետո իրենց անխուսափելի մահվան վերաբերյալ կնոջ նախազգուշացմանը Մհերը պատասխանում է էպիկական կատարյալ հանդարտությամբ, կյանքը անսահման սիրող ե իր ժողովրդի կյանքի հարատևման համար մահ ընդունող հերոսի նման.

Միր տղան որ սաղ ըլնը,
Մինք դենա սաղ կը հիշվինք.
Մե տղեն որ ըլնը՝
Մե տան անուն չկորուսը.[20]։

Իսկ Մամիկը (Մհերի մայրը) Մհերի մահից հետո, երբ Սասունը կրկին ընկել էր գավթիչ Մելիքի բռնության տակ, ուխտ էր արել՝ դուրս չգալ արևերես, քանի մի դյուցազուն Մհերի տեղը չի բռնել։

Ժողովուրդն իր հաղթանակի գաղափարը, անպարտելիությունը ճշմարտացիորեն գտնում է իր միասնության մեջ։ Երբ Դավիթը արդարացի դաժանությամբ պատժում է հարկահավաքության համար Սասուն եկած Մսրա փահլևաններին, ահա թե ինչ է մտածում ժողովուրդը. «...որ Սասունա մի մարդ կրոնա սպանի ուրանց (Մսրա) փահլևաններուն... դե, բրա որ սաղ Սասունն ոտի էլնի, էլ էն ժամանակ Մսրը կը մնա աշխարհիս երեսին»[21]։

Սա «գեղ կանգնի, գերան կկոտրիս» ժողովրդական իմաստությունն է. միակ ու ճշմարիտ հայացքը, դասակարգային հասարակության մեջ ժողովրդի, ազգի փրկությունն իր հավաքական ուժի մեջ տեսնելու անառարկելի գաղափարը։

Հայրենիքի նկատմամբ Դավթի ունեցած սերը բխում է մարդկանց նկատմամբ ունեցած սիրուց։ Նա կռվում է ոչ միայն իր ժողովրդի իրավունքն ու պատիվը պաշտպանելու, ստրկացնող ձեռքից Սասունը ազատ պահելու համար, այլև ազատագրում է բռնակալի լծի տակ հեծող ժողովրդին։ Սա իսկական հայրենասիրություն է, ժողովուրդների բարեկամությունն իր մեջ ներառող համամարդկային զգացմունք։

«...Հայ դյուցազնը,— գրում է Թումանյանը,— Հայկից սկսած մինչև Դավիթ, հասաբակ ասնչպար ժողովուրդը ջոկում է տիրոջից, թագավորից, բռնակալից և սուրը բարձրացնում է միմիայն բռնակալի դեմ, և ոչ երբեք ժողովրդի»[22]։

Դավիթը Մսրա զորքին անվնաս ետ է ուղարկում, պատվիրելով դրաղվել խաղաղ ստեղծագործ աշխատանքով, իսկ պարգևած ազատության համար իրրև «հատուցում» ցանկություն է հայտնում, որ իր «Հորն-մորն» ողորմի տան։ Իսկ մի ուրիշ պատումում, որպես ռազմավար Դավիթը վերցնում է մի գույզ եզ, մի սայլ, այն էլ՝ Մսրամելիքի ձախ ականջը վախկոտ ու նողկալի Վերզոյին տանելու համար՝ իրրև պատասխան նրա բամբասանքին։

* *
*

Հայ ժողովուրդը, ինչպես ասում է պատմաբան Լեոն, ավելի խնամքով է նկարագրել բարի և չար ուժը, քան որևէ ժողովուրդ։ Օրինակ՝ իրանական էպոսի դյուցազն Ռուստամը հզոր է, ուժեղ, բայց անողոք է, խորամանկ ու արյունարբու։ Նա, երբ պարտվում է իր որդուց՝ խորամանկությամբ թողություն է խնդրում, ընկած տեղից կրկին բարձրանում է և սպանում հաղթող երիտասարդին։ Ռուստամը ավելի շատ իր թագավորի, տիրոջ կամակատարն է, քան ժողովրդական սրբազան գաղափարի մարմնացումը։ Աքիլլեսի, Ռոլանդի, Զիգֆրիդի քաջագործությունները համեմատաբար ավելի նեղ գաղափարական բովանդակություն ունեն, քան Դավթի և Սասնա մյուս դյուցազունների քաջագործությունները։ Դավիթը իր տիտանական ուժը չի գործադրում վրեժի համար, ոչ էլ, ասենք, Զիգֆրիդի նման նիբելունգների գանձը ձեռք բերելու նպատակով։ Դավթի հոգուն խորթ են նենգությունը, խարեությունը։ Նա մարդու ամենասուրբ գաղափարի՝ ազատության

20 «Սասնա ծռերս», հատ. Ա, 1936, էջ 165։
21 «Սասնա ծռերս», հատ. Բ, երկրորդ մաս, էջ 190։
22 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 6, էջ 225։

համար մաքառող հերոս է։ «Ժողովուրդը իր բարոյական գաղափարներն է ամփոփել Դավթի մեջ — գրում է Աբեղյանը[23]։

Էպոսում հայրենիքի հզորության աղբյուրը աշխատավոր ժողովուրդն է։ Դավթի կողմից պատուհասված Կոզբադինը պարտության պատճառը համարում է իրենց սխալ պատկերացումը Սասունի և սասունցիների մասին։ Սասունցիների սրերի ու նետի սլաքների հզորությունը Կոզբադինը գտնում է «խոփանկան» լինելու մեջ, այսինքն՝ խոփերից ձուլված, խոփերից պատրաստված լինելու մեջ։ Այստեղ խորապես ճշմարիտ այն գաղափարն է արտահայտված, որ ամենահզոր զենքը ախատանքի մարդու ձեռքով բռնած սուրն է։

Ժողովուրդը ո՞ր հայրենիքի համար է անձնազոհ կռվի դուրս բերել իր հերոսներին և ինչպիսի՞ հայրենիքում է ուզում ապրել։ Դյուցազնավեպի մի շարք պատումներում հերոսները հանդես են գալիս որպես թագավորներ, երկրի կառավարիչներ։ Այս հանգամանքը հող է տվել որոշ բանագետների էպոսը համարել ազնվական տների ստեղծագործություն, իսկ ոմանք էլ հայտարարել են, թե վեպի հերոսները թագավորներ չեն, և բանը սրանով ավարտվել է։

Էպոս կերտող ժողովուրդը կամ ժողովրդի հոգեբանությունն ու հայացքն արտահայտող անհատ ասացողը Սասնա դյուցազուններին թագավոր դարձնելով՝ արտահայտել է ժողովրդապետության ստեղծման և կորցրած հայ պետականության վերականգնման երազանքը։

Ահա թե ինչպես է դիմում Եգիպտոսի միահեծան տերը հայոց թագավորին. «Ով Սենեքերիմ, ժողովրդյան բերնով թագավոր»[24]։ Սենեքերիմի թագավորությունը «իսկական» թագավորություն չէր, իսկ ինքը՝ Սենեքերիմը, ժողովրդի կողմից ընտրված կառավարիչ էր ու արտահայտում էր ժողովրդի շահերը։ «Իսկ Սենեքերիմ թագավորը մի աշխարացի մարդ լինելով՝ ապահովեց իրա ժողովրդյանը և նոցա լալոտ աչքերի արտասունքները մաքրեց»[25]։

Վերցնենք Փոքր Մհերի կերպարը։ Դա ազատության ու երջանկության համար մարտնչողի սիտանական կերպար է, ինչպես կովկասյան լեռներում գամված հունական Պրոմեթեոսը, վրացական Ամիրան ու աբխազական Աբրիսկելը։ Քարայրում փակվելու էպիզոդով Մհերի կերպարում ժողովուրդը դրել է իր իմաստուն ոգին, տևական պայքարով ու անասելի դառնությամբ լի իր պատմության փիլիսոփայությունը, իր ապրելու ու հավերժելու հավատը, օտար բռնակալների սաժան ու անմարդկային լծից ազատագրվելու իր փայփայած բազմադարյան երազանքն ու ակնկալությունը.

Կեղնի վախթ ըմ, Մհեր դուս կ՚իգա,
Մրգի կ՚ադադա դուշմընի ձեռնեն-[6]։

Մհերը ամենից առաջ օտար կեղեքիչների դեմ, ժողովրդի ազատության բռնացողների դեմ պայքարի ելած հերոս է, մի անողոք բռունցք հայրենիքի թշնամիների նկատմամբ։ Ավելի ճիշտ, նա հավասար ատելությամբ ու հավասար ուժով է պատժում և՛ արտաքին, և՛ ներքին կողոպտիչներին։

Մհերի քարայրից դուրս գալը հայ ժողովրդի կորցրած ինքնուրույնությունը վերստին ձեռք բերելու երազանքն է ու շահագործումից զերծ ժողովրդապետություն ստեղծելու գաղափարը։

Մեծ վիպասան Բաֆֆին խոսելով Մհերի բանտարկված լինելու մասին, գրում է. «Մի օր նա (Մհերը) կը խորտակե իր շղթաները և իր ձիու վրա նստած՝ կը սլանա քարայրից, վրեժխնդիր կը լինի իր թշնամիներին և կը մաքրե հայոց աշխարհը չարությունից»[27]։

Հայրենասիրության և մյուս ժողովուրդների նկատմամբ ունեցած բարեկամության գաղափարները էպոսում պատկերվել են ազատության համար պայքարի ելած հերոսների սխրանքներով։

«Սասունցի Դավիթ» էպոսը որպես հումանիստական մեծ ստեղծագործություն մեզ հասել է իր ստեղծագործողի՝ ժողովրդի հոգու իսկական կերպարանքով։ Էպոսի գլխավոր հերոսները իրենց մեջ մարմնավորում են հայ ժողովրդի ազատասիրական, մարդասիրական վեհ զգացումներն ու գաղափարները։ Հումանիզմը այստեղ առաջադրվում է որպես բարոյական բարձրագույն սկզբունք։ Դյուցազնավեպում առաջադիր բարոյական սկզբունքներն իրենց բովանդակությամբ համամարդկային են, քանի որ դրանք շահագործվող դասակարգի հայացքներն են և հակադիր են ստրկացնող դասակարգի, կործանող ու բռնակալ կառավարողների բարոյական հայացքներին։ Ավելին, բովանդակությամբ համամարդկային են այն իմաստով, որ արտահայտում են դարերով կեղեքված

23 Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպ, «Ազգագրական հանդես», 1908, № 2, էջ 23։
24 «Սասնա ծռեր», հատ. Բ, երկրորդ մաս, էջ 37։
25 Նույն տեղում, էջ 27։
26 «Սասնա ծռեր», հատ. Բ, առաջին մաս, էջ 353։
27 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 5, 1956, էջ 74։

. զուլաղրկման ահեղ վտանգի առաջ կանգնած, աշխարհի չարության դեմ ելնող աշխատավոր ժողովրդի շահերն ու ցանկությունները։

Արտաքին ու ներքին շահագործողների նկատմամբ ժողովրդի պայքարն ու ատելությունը էպոսում ստացել են առասպելական գունավորում։ Ժողովրդի երևակայության մեջ այդ շահագործողները պատկերվել են դևի, վիշապի կամ մարդակեր պառավի կերպարանքով։ Սանասարն ու Բաղդասարը սպանում են ջրարգել վիշապին, ազատում բազմաթիվ անպաշտպան աղջիկների։ Սասնա դյուցազունները սխրագործություն են կատարում մարդու բարօրության համար, ինչպես պրոֆեսոր Զալոյանն է ասում՝ «Պրոմեթեոսի կրակից էլ թանկ բանի՝ ջրի համար»։

Հերոսավեպում «ժողովրդական երևակայությունը, որն այնքան շատ է նպաստել մարդկության զարգացմանը»[28], մարդկանց և աստվածների միջև անանցանելի պատնեշ չի քաշել։ Ինչպես հունական էպոսում, մեր էպոսում էլ աստվածները մարդկային կյանք են վարում, շփվում մարդկանց հետ, սիրում, համբուրվում, դրուցում։ Սակայն եթե հին հույնը իր կատարելությունը ռանկացել է տեսնել աստվածների մեջ, ապա հայկական էպոսում ժողովուրդն իր կատարելությունը տեսել է ոչ թե աստվածների, այլ իր նման մարդ-դյուցազունների մեջ։

Սասնա դյուցազունները մեծազույն հումանիստներ են, նրանք տոգորված են այն ազնիվ գրով, որի համար Պրոմեթեոսը աստվածների կամքին հակառակ կրակ տվեց մարդկանց։

Սանասարն ու Բաղդասարը սկզբից կառուցում են աղքատ մարդկանց տները, հետո իրենց տերը.

Առաջ շիննենք զէդոնց ավահիր,
Ու նոր շինենք զմբը բերդ.
Ըդ ֆուխարեք չրն կոնա
Արևուն առջև կենա[29]։

Եվ այդ նրանք կատարում են ոչ թե անձնական փառքի ու երջանկության այլ մարդու բարօրության համար։ Դա մեր էպոսի խոր դեմոկրատիզմն է, որով նա աչքի է ընկնում համաշխարհային էպիկական պոեզիայում։

Հումանիզմն է առաջնորդում երկվորյակ եղբայրներին նաև Պղնձե քաղաքում ծավալված գործողությունների ընթացքում։ Բաղում չարչարանքներից հետո Բաղդասարը հասել է իր երջանկության դռանը, այնպիսի քաջագործություններ է կատարել, որոնց ընդունակ չեն եղել քառասուն կտրիճները։ Բաղդասարը, իսկ մի քանի պատումներում նաև Սանասարը, չեն հանդուրժում Դեղձունի անմարդկային վերաբերմունքը։ Բաղդասարը ջերմորեն սիրելով հանդերձ զեղեցկուհի Դեղձունին՝ կշտամբում է նրան և հետը չպսակվելու կամ սպանելու սպառնալիքով ստիպում է ազատել փեսացուներին կախարդանքից։

Բաղդասարի ամուսնության էպիզոդը հայկական վերածնության շրջանի սիրո, ամուսնության բազմակնեաց հարցի մարդկային լուծումն է, անհատի մարդկային զգացմունքների գնահատման ու արժեքավորման վայելուն արտահայտությունը։

Սասնա դյուցազունները հզոր են, ազնիվ, տված խոսքը սրբություն է նրանց համար. «Մեր մոտ սուտ չկա. մենք մեր խոսքին տեր ենք»[30], — ասում է Ջոջ Միքրոնը։ Մեռնող դյուցազնի վերջին ու միակ կտակը իր որդիներին լինում է այն, որ անգամ թշնամու հետ խորամանկություն չանեն, այլ շիտակ մնան ու կտրիճի նման բաց ճակատով հանդես գան. «Ձեր դուշմնի խետ կալպութեն չաներ, ապա կտրիճի պես կովեք խետ ինոնց»[31]։

Պատվի ու պարտքի զգացողությունից, թշնամու հետ շիտակ ու անկեղծ լինելու ներքին դրդումից է, որ Մեծ Մհերը կռիվ է գնում իր մեռած հորը ապատելու սուտ երդումից. «Կռ ես էն քո ասած ճոչ Մհերն իմ. մկա իկեր եմ վեր քի կռիվ, որ խասկանաս, թե իմ խեր ուր խոսքի տեր մարդ ի»[32]։

Մհերը հանուն մարդու բարօրության կռվի է դուրս գալիս աոյուծի դեմ, սպանում է Սև Եղան, դևերին ու ժողովրդի այլ թշնամիներին։ Էպոսի պատումներից մեկում Մեծ Մհերը հրաժարվում է իրեն առավելություն տվող զենքերից և աոյուծի հետ մարտնչում է բնությունից տված ուժով։

---

28 «Մարքսը և Էնգելսը արվեստի մասին», հ. 1, 1963, Երևան, էջ 325։
29 «Սասնա ծռերս», հատ. Բ, առաջին մաս, էջ 12։
30 «Սասնա ծռերս», հատ. Բ, երկրորդ մաս, էջ 407։
31 Նույն տեղում, էջ 432։
32 Նույն տեղում, էջ 437։

Մ՚ներն ասաց.— «Աղյուծի մերն էլ Աստված դանչելով ա ծնե, իմ մերն էլ ինձի յա բերե։ Ես իմ ասպապն պիտի գնեմ գետին, գուլաշ կպնիմ աղյուծի խետն»[33]։

Էպոսում ժողովուրդը մեզ ներկայացնում է Դավթի բնավորության էպիկական վեհությունը, նրա patriotիզմը, հայրենիքի և ընդհանրապես բոլոր ժողովուրդների ազատության ու բարօրության համար նրա անձնուրաց պայքարը։ Այդ վսեմի կողքին ներկայացված են նաև նսեմն ու չնչին, մարդատյացն ու բռնակալը՝ Մսրամելիքը։ Դյուցազնավեպում էպիկական գոյավիճակը անգնա է գալիս այնպիսի իրադրության մեջ, երբ առկա են բախումներ ու ներհակություններ վեսի ու չնչինի միջև։ Զարմանալի տրամաբանությամբ ժողովուրդը Մելիքին ու Դավթին եղբայրացրել է՝ ավելի ցայտուն ու հատկորոշ ցույց տալու համար հումանիստն ու մարդատյացը, չարն ու բարին։

Դավթի հումանիզմը հայ աշխատավոր ժողովրդի հայացքն է, դարերով սրբագործված նրա բարոյական սկզբունքը։

Ժողովրդի բարօրության համար Դավիթը անխնա պատժում է անաշխատ պորտաբույծին, աշխատավոր մարդու կողոպտիչին, դրա հետ մեկտեղ եղբայրանում արդար վաստակով կյանքը չենացնող մարդկանց հետ։

Եթե հանճարեղ Հոմերոսը հրաժարվում է հասարակ ժողովրդի երգիչ դառնալուց և ժողովրդի ներկայացուցիչ Թերսիդեսին հանդես է բերում որպես մտավոր ու ֆիզիկական մի ոչնչություն, ապա «Սասունցի Դավիթ» էպոսը հենց աշխատավոր ժողովրդի հերոսական արարքների գեղարվեստական պատկերն է։ Այստեղ և՛ հեղինակն է ժողովուրդը, և՛ հերոսներն են ներկայացնում ժողովրդին։ Էպոսում արտաքին բռնակալը՝ Մսրա Մելիքը, միաժամանակ ներքին հարստահարիչ է՝ Մսրա ժողովրդի շահագործողը։ Հետևաբար, պայքարը արտաքին կողոպտիչի դեմ պայքար է նաև ներքին շահագործողների նկատմամբ։ Սրանումն է «Սասունցի Դավիթ» էպոսի հումանիզմի դեմոկրատական բովանդակությունը։ Էպոսում այդ բանի փայլուն արտահայտությունն է այն էպիզոդը, երբ Մսրա ծերունին խորին համոզմունքով ճշմարտությունը բացում է իր հայրենիքի գոյատևության համար արդարացի կռվի ելած հզոր Դավթի առաջ, որ ողջ բանակի զինվորներից և ոչ մեկն էլ իր կամքով չի եկել, նրանց բոլորին էլ զորով են կռվի դաշտ քշել. «Կիտցած էլնես, որ ինոնցից մեկն էլ ուր կամքով չիկե կռիվ, ապա գմեն էլ զորով պիրեր են քո դեմ»[34]։ Ծերունին մատնացույց է անում իսկական ու միակ թշնամուն՝ Մսրա Մելիքին. «...քո գուշման գո էն չաղրի մեջն ի. ինորից զատ քե գուշման չկա»։

* * *

Մի սերնդից մյուսին է անցնում այն, ինչ առաքինի է, բարի, մարդկային, ինչ բխում է ժողովրդի սրտից, գուլալ է, անսուտ։ Դրանք գաղափարներ են, որոնք ազգային լինելով հանդերձ՝ չունեն ազգային սահմաններ, հետևապես և համամարդկային են։

Իրանական էպոսի հերոսների պայքարը ընդդեմ խավարի ու չարի պաշտպանների, մոտ է եղել հայ ժողովրդի սրտին. «Իրանական վեպն ու առասպելը,— գրում է մեծանուն էպոսագետ Կ. Մելիք-Օհանջանյանը,— իջնում են հայ գյուղացու խրճիթն ու արմատներ ձգում նրա հոգևոր աշխարհի անդաստանում»[35]։

Դարեր շարունակ ապրելով կողք-կողքի հայ և պարսիկ ժողովուրդները հազորդակից են դարձել իրենց հոգևոր հարստություններով։ Հայ գյուղացին սիրել է իրանական էպոսի հերոսներին, ոգևորվել նրանցով, պատմել է այն ու նրանց ամուր թելերով կապել է «Սասնա ծռերի» հետ և դարձրել հոգեհարազատ։

Այսպես, Բ. Խալաթյանցի կողմից գրի առնված «Ռուստամ Զալի» վարիանտներից մեկում ասվում է, որ «Ավալ ժամանակ Սասումա քաղաք Զալ թագավոր կր տիրեր... Զալ թագավորին կեր մեկ աղրեր, անուն Դավիթ... Դավիթ ուներ մեկ տղա, անուն Բուրգեն»[36]։ Բուրգեն և Իրանի մյուս փահլևանները կոչվում են Սասնա ծռեր։ Ռուստամը և Զալը սասունցի են։ Ռուստամի հետ թշնամիների դեմ կռվի է գուրս գալիս Զենով Հովանը։

Սասուներ քաջեր, մարդկության բարօրության համար մարտնչող զյուցազուններ է ծնում, Ռուստամն էլ քաջ է ու կռվում է բռնության դեմ՝ հետևաբար սասունցի է, Դավթի եղբայրը։ Նույն

---

33 «Սասնա ծռեր», հատ. Բ, առաջին մաս, էջ 146։

34 «Սասնա ծռեր», հատ. Բ, երկրորդ մաս, էջ 470։

35 Կ. Մելիք-Օհանջանյան, Շահ-Նամեի վիպական մոտիվները հայ գյուղացու հոգևոր աշխարհում, Ֆիրդուսու 1000-ամյակին նվիրված ժողովածու, 1934, Երևան, էջ 113։

36 Բ. Խալաթյանց, Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ, Փարիզ, 1901, էջ 24։

սկզբունքը մենք տեսնում ենք հենց մեր էպոսում։ Փոքր Մհերի ճյուղը ավելի շուտ է կազմավորվել, և Մհերը ոչ մի ազգակցական կապ չունի Դավթի հետ։ Դավիթը ազգակից չէ ոչ Մհերին և ոչ Սանասարին ու Բաղդասարին։ «...Դավթի կյանքը և գործերը,— նկատել է դեռ Սրվանձտյանցը,— միջին դարերուն կը վերաբերին, բայց անմիջական դավակ լինել Աղրամելիքին, այդ հավիտենական առասպել էր»[37]։

Դյուցազնավեպում Սանասարն ու Բաղդասարը, Մեծ Մհերն ու Դավիթը, Փոքր Մհերն ու Քեռի Թորոսը քաջերի տարբեր սերունդներ են, պատմական տարբեր շրջանների հերոսական արձագանք, որոնց ժողովուրդը կապել է որպես եղբայրներ, հայր ու որդի, քեռի ու հորեղբայր՝ հիմք ընդունելով դյուցազունների ներքին արժանավորությունները՝ հայրենասիրությունը, հումանիզմը, մարդկության բարօրության ծառայելու պատրաստակամությունը։

«Սասունցի Դավիթ» էպոսը հատկապես վերջին հատվածներում դառնում է առավել ևս խորհրդանշական ու տիեզերական։ Մհերը դուրս է գալիս աշխարհի չարության դեմ։ Նա, ինչպես իր դյուցազուն նախորդները, շարունակում է կռվել արտաքին ստրկացնողների դեմ, բայց ավելի հուժկու ատելությամբ է լցված սոցիալական անարդարությունների նկատմամբ։ Մհերը իր հերոսական արարքներով ցանկանում է աշխարհից վերացնել լեռնացած թշվառությունը։ Մարդու ապատության ու բարօրության համար է մարտնչում Մհերը Հալեպի չար, մարդակեր պառավի դեմ կամ օտար հարկահանների դեմ՝ առասպելական Բուրջա քաղաքում։ Նա հեղեղումից ազատում է Ջղիրու քաղաքը՝ հսկա ժայռեր գլորելով գետի մեջ՝ կառուցում է Բրջա-Բալաք բերդը՝ քաղաքի ապահովության համար։ Մհերի հումանիզմը աշխատավոր ժողովրդի հումանիզմն է։ Պատահական չէ, որ նա դառնում է «իրիցու տղա» և կռիվ գնացող վեզիրի տղային ձիուց ցած է գլորում, խլում զենքերը. «Տեսավ՝ վուգրի լաճ ձի մ՝ խեծի» ճակիր կապի, կերթա... Մհերն էլ սիլե մ՝ լդարկ ականջի տակ, ձիուց իրի տակ»[38]։ Կամ ինչպես «այծի կողաշարքով» սպանում է թագավորի բոլոր պալատականներին։

Սոցիալական դարավոր պայքարի գեղարվեստական յուրահատուկ արտացոլում է էպոսում կնոջ, որպես հասարակության իրավազոր անդամի, իրավունքների պաշտպանությունը, ազատ ու անկաշկանդ սիրո, կյանքի և գեղեցկության փառաբանումը։ Մի հանգամանք, որ Թոնդրակյան դաղափարների, որպես ժամանակի առաջադեմ գաղափարների մարմնավորումն է էպոսում՝ ի հակադրություն ֆեոդալական ռեակցիոն աշխարհայեցողության, մասնավորապես, միջնադարյան ասկետիզմին։

Ժողովուրդը էպոսում պատկերել է կրոնական կապանքներից ու ֆեոդալական հասարակության ստորացնող օրենքներից միանգամայն ազատ և ինքնուրույն կանացի կերպարներ, ինչպես Ցովինարը, Արմազանը, Խանդութը, Գոհարը, Ջմշկիկ Սուլթանը և ուրիշներ։ Նրանք իրենց թե՛ հոգեկան և թե՛ ֆիզիկական կարողությամբ չեն զիջում տղամարդկանց ու նրանց հետ գործում են իբրև հավասարը հավասարի հետ։ Հենց Դավթին ուղղված Խանդութի այն խոսքը, թե «դու քո հոր կտրիճն ես, ես լե իմ» կամ Խանդութի մասին Քեռի Թորոսի այն պատկերավոր արտահայտությունը, թե «առյուծն առյուծ ա, էղնի էգ, թե որձ մեկ է», կանանց իրավահավասարության վերաբերյալ ժողովրդի դավանած հայացքն է ու պատկերացումը։

Իրանական էպոսում կանայք հանդես են գալիս քողածածկ դեմքերով, հլու իրենց ստրկական դիրքին։ Գերմանական «Նիբելունգների երգ»-ում կինը ծնողների կամքին ու ցանկության հլու մի էակ է, ունի իր պարտականությունը և հեռու է իր մաքուր զգացմունքները անկեղծ ձևով արտահայտելուց։

Ինչպես «Շահ-Նամեում», այնպես էլ «Նիբելունգների երգ»-ում տիրապետող է ֆեոդալական-արիստոկրատական նեղ դասակարգային հասկացողությունը կնոջ, սիրո, ընտանիքի հարցերում։ Հայկական էպոսում աշխատավոր ժողովուրդը ազատ, փոխադարձ սիրո գաղափարն է պատգամում Քեռի Թորոսի բերանով.

Էտի աղջկա բանն ա.
Որ մեկիդ տղին կ՝առնի, թո առնի[39].

---

37 Գ. Սրվանձտյանց, Կրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, Կ. Պոլիս, 1874, էջ 129։

38 «Սասնա ծռերս», հատ. Ա, էջ 115։

39 «Սասնա ծռերս», հատ. Բ, երկրորդ մաս, էջ 143։

նամ՝ «խնձորով սիրելու» բուն ժողովրդական հայացքը արտահայտված է խանդուքի միջոցով։

Էն գախ՝ ես որի սրտի վրեն
Որ խնձոր գարնեմ, իմ խավնածն են ի[40]։

Հայ ժողովուրդը իր կերտած հանճարեղ էպոսում, որն իր վրա կրում է հայկական վերածնության դրոշմը, ժխտական դիրք բռնելով կնոջ ստրկական վիճակի նկատմամբ՝ պաշտպանում է ազատ ընտրության, փոխադարձ սիրո մարդկային վսեմագույն դաղափարները։ Էպոսում մարմնացել են աշխատավոր ժողովրդի փիլիսոփայական խորհումները, որ սերը հենց ինքը կյանքն է, կյանքի իմաստն ու խորհուրդը։ Չի կարելի հայրենասեր լինել՝ առանց սիրելու մորը, ընտանիքին, և հումանիստ լինել առանց հայրենիք ու ընտանիք ունենալու։ Վերջապես սերը մարդու այն «բրազան ու վեհագույն զգացմունքն է, որ ծնում է հանճարեղ մտքեր ու զգացմունքներ»[41]։

Օտար նվաճողների ու ֆեոդալական կեղեքման դեմ հայ ժողովրդի մղած դարավոր պայքարի ընթացքում ձևավորվեցին բարձր հումանիզմի, աշխատասիրության ու հայրենասիրության սկզբունքները, մեր դյուցազնավեպի անանց գեղարվեստական առանձնահատկությունները, այն արժանիքները, որոնք ժողովուրդը իր հանճարեղ բանականության ու «կամքի բուրվառով» առաքել է ապագա սերունդներին, արժանիքներ, որոնք «կազմում են հայ դրականության հավերժական կապիտալը»[42], մեր ժողովրդի իմաստասիրության անմահ հուշարձանը։

---

[40] «Սասնա ծռերը», հատ. Ա, էջ 1072։

[41] Ա տ. Ղ ո ր յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 10, 1964, Երևան, էջ 467։

[42] Ա. Տ ե ր տ ե ր յ ա ն, Սասունցի Դավթի հազարամյակը, Սասունցի Դավիթ, Պետհամալսարանի հրատարակչություն, 1939, Երևան, էջ 40։